ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան 0051, Կոմիտաս 49/2, Հեռ. 85-20, 060 680212, Ֆաքս 233600, էլ.փոստ: info@msib.gov.am

ՀՐԱՄԱՆ N 799-Ա-20.09.2024թ.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման N 1 հավելվածի 2-4-րդ կետերով, 2018 թվականի հունիսի 11-ի N 732-L որոշման հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի պետ Տաթևիկ Զորյանին:
2. Տաթևիկ Զորյանին՝

1) Ապահովել տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,
2) Տեղեկատվություն փնտրողին մատչելի ձևով բացատրել տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը,
3) Մշակել ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

ԱՐՄԵՆ ԿՈՏՈԼՅԱՆ